Վիլեն Պարույրի Հակոբյան
(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ հայ բժշկագիտության երախտավոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Պարույրի Հակոբյանի ծննդյան 85-ամյակը, որի կյանքն անմնացորդ նվիրում է Հայրենիքին: Բովանդակալից ու հագեցած կյանքի ուղի է անցել վաստակաշատ գիտնականը՝ գյուղական բժշկական տեղամասի վարիչի պաշտոնից մինչև Երևանի բժշկական համալսարանի ռեկտոր, «Հայաստանի բժշկագիտություն հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական:

«Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրակազմը խորին խոնարհումով ու ակնածանքով շնորհավորում է Ձեզ Ձեր ծննդյան 85-ամյակի կապակցությամբ: Դուք Ձեր արգասաբեր գործունեության մեջ նախնառաջ կարևորեցիք Հայրենիքն ու նրա շահը: Ինչ էլ որ արել եք, ամենից առաջ Ձեր նպատակը եղել է անշահախնդիր ծառայելը ժողովրդին: Հայրենիքն էլ ըստ արժանվույն գնահատել է Ձեր գիտակազմակերպչական գործունեությունը՝ շնորհելով Ձեզ ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում և «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան, «Մխիթար Հերացի», «Դրաստամատ Կանայան», «Գարեգին Նժդեհ», «Սպարապետ Վ.Սարգսյան» մեդալներ: Երկար տարիներ լինելով Գերագույն հոգևոր խորհրդի անդամ՝ Ձեր ազգանվեր գործունեության համար պարգևատրվել եք նաև Հայ առաքելական եկեղեցու կողմից «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Ներսես Մեծ» շքանշաններով:

Ձեր կյանքը գիտությանը և ժողովրդին ծառայելու լավագույն օրինակ է, և Ձեր բեղմնավոր գործունեության ու մարդկային բարձր հատկանիշների շնորհիվ Դուք, հիրավի, ձեռք եք բերել մեծ ճանաչում և հարգանք հանրության ամենալայն շրջաններում:

«Հայաստանի բժշկագիտություն» հանդեսի խմբագրակազմը ջերմորեն շնորհավորում է Ձեզ և մաղթում երկար տարիների ստեղծագործ ու անխոնջ աշխատանք: